



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.4 (30)

Общественные и гуманитарные науки

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

Humanities and Social Sciences

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2019

ԵՊՀ ՌԻԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.4 (30)

Հասարակական և հումանիտար գիտություններ

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the Resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեռյան
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

Редакционная коллегия:

д.ф.н., проф. Д. Петросян
д.ф.н., проф. Л. Матевосян
д.ф.н., проф. Ю. Аветисян
д.ф.н., проф. А. Мурадян
д.ф.н., проф. В. Арутюнян
д.п.н., проф. Г. Аванесян
д.и.н., проф. С. Мкртчян
д.э.н., проф. А. Мнацаканян
д.э.н., проф. А. Саргсян
д.п.н., проф. Г. Керян
д.ф.н., доц. Ш. Паронян
к.ф.н., доц. Н. Варданын
к.ф.н., доц. В. Егиазарян
к.э.н., доц. К. Хачатрян
к.ф.н., ассист. Н. Погосян
к.ю.н., ассист. В. Григорян
к.ю.н., ассист. Т. Суджян
к.ю.н., ассист. А. Тавадьян
к.п.н., ассист. Д. Саргсян
к.и.н., ассист. Р. Карапетын
к.ф.н., ассист. К. Яралян

Editorial Board

DSc, Prof. D. Petrosyan
DSc, Prof. L. Matevosyan
DSc, Prof. Y. Avetisyan
DSc, Prof. S. Muradyan
DSc, Prof. V. Harutyunyan
DSc, Prof. H. Avanesyan
DSc, Prof. S. Mkrtchyan
DSc, Prof. H. Mnatsakanyan
DSc, Prof. H. Sargsyan
DSc, Prof. T. Keryan
DSc, Associate Prof. Sh. Paronyan
DSc, Associate Prof. N. Vardanyan
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan
PhD, Associate Prof. K. Khachatryan
PhD, Assistant Prof. N. Poghosyan
PhD, Assistant Prof. V. Grigoryan
PhD, Assistant Prof. T. Sujyan
PhD, Assistant Prof. A. Tavadyan
PhD, Assistant Prof. D. Sargsyan
PhD, Assistant Prof. R. Karapetyan
PhD, Assistant Prof. K. Yarlyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Լրագրողական գործունեության էթիկական նորմերն ընկալելու համար հարկավոր է հասկանալ, թե ինչ է էթիկան, ինչու է այն անհրաժեշտ պահպանել, և ինչ առավելություններ ունի էթիկայի նորմերին տիրապետող, մեդիագրագետ լրագրողն իր մրցակիցների նկատմամբ: Էթիկայի և բարոյական նորմերի պահպանման անհրաժեշտության մասին խոսել է դեռևս Արիստոտելը մ.թ.ա 350 թ.-ին՝ «ոսկե միջին» հասկացության մասին գրելիս: Հույն փիլիսոփան կարծում էր, որ էթիկական վարքը դրսևորվում է հավասարակշռության պահպանման շնորհիվ: Նա գտնում էր, որ էթիկական նորմը՝ ոսկե միջինը, հենց այն կետն է, որը գտնվում է առավելությունների և թերությունների միջև [1]:

Էթիկայի, մեդիա օրենսդրության մասին գրվել են բազմաթիվ գրքեր: Հետևաբար, այս երևույթն ունի բազմաթիվ սահմանումներ: Ըստ առավել գործածականի՝ «լրագրողական էթիկան լրագրողական շրջապատում ընդունված պահելաձևի այն նորմերն են, որանք համարվում են բարոյական» [2]:

Անշուշտ, լրագրողները հաճախ շփոթության մեջ են հայտնվում, քանզի «բարոյականություն» հասկացությունը շատ սուբյեկտիվ կատեգորիա է և սահմանված չէ օրենսդրական ակտերում: Ժուռնալիստական էթիկայի բուն էությունը լիարժեք ընկալելու համար անհրաժեշտ է ի սկզբանե սահմանազատել «լրագրողական էթիկա» և «օրենսդրություն» հասկացությունները: Լրատվադաշտում գործող մերօրյա շատ լրագրողներ նույնականացնում են այս եզրույթները: Իրականում դրանք փոխլրացնող, բայց տարբեր երևույթներ են: Էթիկական նորմերն իրավական ուժ չունեն՝ ի տարբերություն օրենսդրական ակտերի. դրանց չհետևելու դեպքում լրագրողը չի ենթարկվում իրավական որևէ տույժի: Մինչդեռ զանգվածային լրատվության միջոցների գործունեությունը համակարգող բազմաթիվ ակտեր կարող ենք գտնել ցանկացած երկրի օրենքներում: Հայաստանի Հանրապետությունում կան օրենքներ, որոնք վերաբերում են մամուլի ազատությանը, ընտրությունների ժամանակ լրագրողի աշխատանքին չխոչընդոտելուն, գրապարտությանը և վիրավորանքին, հեղինակային իրավունքի խախտմանը, գրագողությանը, լրագրողական աղբյուրի չբացահայտմանը: Հարկավոր է հասկանալ, որ այս հոդվածներն էթիկական նորմեր չեն, այլ օրենսդրական ակտեր: Անշուշտ, էթիկական նորմերը պահպանելու դեպքում լրագրողը դժվար թե բախվի իրավական խնդիրների:

Այսպիսով, սույն հետազոտության ընթացքում կփորձենք հիմք ընդունել էթիկական խախտումների միջազգային փորձը և սխալների օրինակով հետազոտել հայաստանյան մեդիադաշտի էթիկական խախտումները՝ քննարկելով դրանց հետևանքները:

Լրագրողի աշխատանքային առաքելությունը հասարակական հնչեղություն ունեցող բազում հարցերը գրագետ և օբյեկտիվ լուսաբանելու կարողությունն է: Լրագրողները փորձում են պահպանել հասարակության և իշխանությունների միջև կապը, միջնորդի կամ կատալիզատորի դեր ստանձնել այս հարցում: Ուստի, չափազանց կարևոր է, որ պաշտպանվեն նաև լրագրողների իրավունքները: Այսօր Հայաստանում գործում են մի շարք կազմակերպություններ՝ «Լրագրողներ առանց սահմանի», «Ժուռնալիստների ֆեդերացիա», որոնք պաշտպանում են լրագրողների իրավունքները՝ անդրադառնալով էթիկական նորմերի՝ զանգվածային լրատվամիջոցների կողմից թույլ տրված խախտումներին: Նշված կազմակերպություններից զատ բազմաթիվ լրատվամիջոցներ կան, որոնք մշակում են անձնական էթիկայի սեփական կանոնագրերը: Լրագրողը պարտավոր է առաջնորդվել, եթե ցանկանում է աշխատել տվյալ լրատվամիջոցում: Առավել հետաքրքրական է «Առավոտ»-ի կանոնագիրը, ըստ որի՝ լրատվամիջոցի լրագրողները չպետք է քննադատեն այլ լրատվամիջոցների և չպետք է պատասխանեն վերջիններիս քննադատությանը [3]: Այս խնդիրն այսօր շատ արդիական է մեզանում, քանզի էթիկական գլխավոր խախտումներից է հայաստանյան մեդիադաշտում լրագրողների և լրատվամիջոցների՝ էթիկական խախտումներով լի մրցավազքը, ինչի արդյունքում ամենաշատը տուժում է ընթերցողը:

Լրագրողները պատասխանատու են իրենց ընթերցողների առաջ, ուստի պետք է կարողանան մի կողմ դնել անձնական ամբիցիաներն ու հարկ եղած դեպքում ներողություն խնդրեն՝ ընդունելով և ուղղելով թույլ տված էթիկական խախտումը: Հայաստանյան մեդիադաշտի էթիկական խախտումներին անդրադառնալուց առաջ հարկավոր է գիտակցել այն հանգամանքը, որ ցանկացած լրատվամիջոց ձգտում է վարկանիշ ունենալ, քանի որ բարձր վարկանիշը լրատվամիջոցի եկամտի աղբյուրն է: Պարզապես հաճախ բարձր վարկանիշի մոլուցքով տարված լրագրողները կոպտորեն խախտում են էթիկայի բոլոր սկզբունքները՝ ոտնահարելով մարդկային զգացմունքներն ու հասցնելով հոգեբանական մեծ տրավմա: Միջազգային լրագրության էթիկական ամենավառ խախտումներից մեկը կարող ենք համարել թերևս քսան տարի առաջ տեղի ունեցած աշխարհացունց մի դեպք՝ Միացյալ Թագավորության արքայադուստր Դիանայի մահվան լուրը, որը շոկային ալիք էր առաջացրել հասարակության շրջանում: Այդ օրերին բոլոր ԶԼՄ-ներին պաշտոնապես խնդրել էին, որ չհրապարակեն Դիանայի դիակի լուսանկարները, սակայն լրատվամիջոցները բարձր վարկանիշ ունենալու համար հատեցին էթիկական բոլոր նորմերի՝ թերթերը ողողելով արքայադուստր այլալված դիակի լուսանկարներով:

Սոցիոլոգ, հետազոտող Մարշալ Մաքլյուենի «Տեխնոլոգիական դետերմինիզմի տեսությունը» վաղուց էր կանխատեսել, որ համացանցը լայն տարածում է ստանալու:

Ըստ այս տեսության՝ մեդիան մեզ ամենուր հետապնդում է, իսկ մենք չենք կարողանում փախչել համացանցից և տեղեկատվությունից: Այս դեպքում էթիկական խախտումների խնդիրն ավելի է բարդանում, քանզի հասարակության տեղեկատվական ծարավը հագեցնող լրատվամիջոցը, որը բոլորի ընթացքում մի քանի լուր է տպագրում, պարզապես ժամանակ չունի մտածելու էթիկական նորմերի պահպանման մասին [8]:

Հայաստանյան լրատվամիջոցները, ցավոք, դասեր չեն քաղում միջազգային հեղինակավոր լրատվամիջոցներից՝ շարունակ ավելացնելով սխալների թիվը: Անդրադառնանք Երևանում ծնված հնգյակի օրինակին: Հասկանալի է, որ իրադարձությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ մարդն անկախ իրենից հեշտությամբ դառնում է նաև ապատեղեկատվության կամ առօրյա ուշադրությունից ու իրական օրակարգերից շեղող լուրերի և տեղեկատվության զոհ: Լրատվամիջոցները հաղորդագրություն են ստանում ՀՀ Առողջապահության նախարարությունից այն մասին, որ Երևան քաղաքում հնգյակ է ծնվել, սակայն երեխաների առողջական վիճակը ծանր է [6]: Այժմ ներկայացնենք վերնագրեր, որոնք գրել են լրատվամիջոցներն այդ օրերին՝ «*Հնգյակի անուններն արդեն որոշել ենք*» [6], «*Անունները որոշել ենք, բայց դեռ չենք բաշխել*» [4] և այլն: Այդպիսի վերնագրերն անթույլատրելի էին այն ժամանակ, քանի որ այսօր հնգյակից կենդանի են մնացին ընդամենը երկուսը: Այժմ հնգյակի ծնողներն այդ հոդվածները կարդալիս կարող են ենթարկվել հոգեբանական տրավմայի:

Էթիկական խախտման մեկ այլ, ավելի թարմ օրինակ է Արմավիրի մարզում երեխաներին պատանդ վերցրած երիտասարդի դեպքը: Այստեղ գործ ունենք երեխայի հոգեբանության խաթարման դեպքի հետ: Լրատվամիջոցը պետք է առավել զգույշ աշխատի, իսկ լավագույն տարբերակը լրատվամիջոցի՝ հոգեբանների հետ համագործության ունակությունը պետք է լինի, և ոչ թե վարկանիշային մրցավազքը: Պատանդառված վերջին երեխային ազատ արձակելուց հետո երեխայի հայրը տեսանյութ է նկարահանում, որտեղ նա և երեխան տեսախցիկի առջև են. հայրն ասում է, թե երեխան չի վախեցել, և ամեն ինչ կարգին է: Այդ օրերին երեխային այցելում են տարբեր լրագրողներ, ոստիկաններ՝ ամեն անգամ հիշեցնելով կատարվածի մասին: Այսօր այդ երեխան չի կարողանում խոսել, քանի որ ժամանակին հոգեբաններից բացի ոչ ոքի չպետք է թույլ տրվեր շփվել երեխայի հետ: Ըստ էության, սա ոչ միայն էթիկական, այլև երեխայի իրավունքների կոպիտ խախտում էր [5]:

Ուշադրության արժանի են էթիկական խախտումների այն օրինակներ, որոնց դեպքում վերնագրերը բացարձակապես չեն համապատասխանում իրականությանը կամ համապատասխանում են մասամբ: Օրինակ՝ վերնագրում գրված է՝ «*Ավտոբուսը կողաշրջվել է, կա մի քանի հարյուր զոհ*»: Շատերը կցանկանան ընթերցել այս նորությունը և համոզվել, որ ավտոբուսն իսկապես կողաշրջվել է, բայց Սոմալիի մայրաքաղաքում: Այս դեպքում լրատվամիջոցի վերնագիրը համապատասխանում է իրականությանը, սակայն լրատվամիջոցը գիտակցել է, որ եթե վերնագրում նշի Սոմալի

երկրի անունը, ապա իր հոդվածը Հայաստանում քիչ կրնաթերցեն: Կան դեպքեր, երբ վերնագիրը բացարձակապես չի համընկնում նյութի բովանդակությանը: Սովորաբար նման վերնագրեր կարելի է հանդիպել հայտնի երգիչների, դերասանների, քաղաքական գործիչների հետ կատարված դժբախտ պատահարների նյութերում, որոնց հղմամբ անցնելիս կա՛մ հանդիպում ենք որևէ գովազդի, կա՛մ հայտնվում առցանց խաղի կայքէջում:

Հարկավոր է ուշադրություն դարձնել նաև հաշմանդամություն ունեցող մարդկանց, քանի որ լրագրողը պետք է կարողանա պաշտպանել հաշմանդամների իրավունքները և յուրաքանչյուր հարց ուղղելիս զգույշ լինի՝ անպատեհ չվիրավորելով առանց այդ էլ խոցելի ներաշխարհ ունեցող անձանց: Սույն հետազոտության ընթացքում փորձեցինք գտնել օրինակներ, որտեղ հայ լրագրողներն անբարեխիղճ վերաբերմունք են դրսևորել հաշմանդամության խնդիր ունեցող մարդկանց հանդեպ, սակայն, բարեբախտաբար, չգտանք:

Համաձայն հայաստանյան էթիկական դաշտն ուսումնասիրող մասնագետների՝ այսօր մեծ վտանգ է ապատեղեկատվության տարածումը: Այստեղ կարևորվում է արդեն լրագրողի՝ ոչ միայն տեղեկատվություն հաղորդողի դերը, այլև այն, որ նա հաղես է գալիս որպես զտիչ:

Մեդիագրագիտությունն այսօր ավելի կարևոր է հասարակության համար, քան լրագրողների: Լրագրողներն արդեն իսկ մեդիագրագետ են, քանի որ հենց նրանք են ստեղծում և տարածում մեդիաբովանդակությունը, սակայն հասարակությունը մեդիագրագետ չէ, ուստի, չի կարողանում տարբերել, թե որ նյութն է ճշմարիտ, որը՝ ոչ: Մարդկանց մեծ մասին բացարձակապես չի հետաքրքրում, թե որ աղբյուրից են ստանում տվյալ այս կամ այն տեղեկությունը՝ շատ հաճախ տարածելով աղբրեջանական կայքերի տեղեկատվությունը: Այդ է պատճառը, որ անհրաժեշտ է մեդիագրագիտության դասընթացներ անցկացնել հասարակության տարբեր շրջանակների համար՝ ի գիտություն ընդունելով, որ անընդմեջ գտնվում ենք տեղեկատվական պատերազմների կիզակետում: Հասարակությունը եթե մեդիագրագետ լիներ, կպահանջեր և կստիպեր լրագրողներին գրել էթիկայի նորմերին համապատասխան նյութեր: Հեռուստատեսության, ռադիոյի, թերթերի դեպքում մարդն ընտրելու հնարավորություն չունի. նա կարող է միայն փոխել ալիքը կամ թերթել էջը, իսկ համացանցի դեպքում մարդիկ բազմաթիվ աղբյուրներից են ընտրում, թե որ կայքերից ստանան տեղեկատվություն, ուստի, մեդիագրագիտությունը վերաբերում է հենց համացանցային մեդիային: Ի դեպ, մեդիագրագիտության միջազգային պայքարն սկսել է հայտնի «The Guardian»-ն իր «Fake or Real?» հոդվածաշարում՝ սովորեցնելով տարբերել սուտը ճշմարտությունից:

Ռազմական լրագրության էթիկական առանձնահատկություններն ապրիլյան պատերազմի համատեքստում. Այսօր մենք տեղեկատվական պատերազմ ենք վարում միաժամանակ երկու՝ թուրքական և աղբրեջանական դաշտերում, ուստի,

հարկավոր է միշտ զգոն լինել: Այս նկատառումով ՀՀ Պաշտպանության նախարարությունը լրագրողների համար պատրաստել է ռազմական էթիկայի ուղեցույց:

Պաշտպանության բանակին վերաբերող ցանկացած հոդված գրելիս ռազմական լրագրողի նպատակը պետք է լինի ոչ թե բանակի քարկոծումը, այլ պետական և ազգային շահի պաշտպանությունը:

Մամուլում հաճախ կարող ենք հանդիպել նման վերնագրերի՝ «Մարտակերպի զորամասերից մեկում զինծառայող է զոհվել», «Հաղորդում են, որ ավելի մանրամասն տեղեկատվություն կհաղորդվի ավելի ուշ»: Այդ ժամանակ Մարտակերտում ծառայող զինվորների ծնողներն ու հարազատները խուճապային տրամադրություններ են ստեղծում. զանգահարում են ու փորձում պարզել զոհված զինծառայողի ինքնությունը, մինչդեռ լրատվամիջոցը կարող էր լուրը հաղորդել զոհված զինծառայողի ինքնությունը հստակ ճշտելուց հետո: Լրագրողները հաճախ էթիկական խախտումներ են թույլ տալիս՝ հոդվածներում հրապարակելով զորամասերի աշխարհագրական դիրքի, զինատեսակների, մարտական հենակետերի լուսանկարներ, որոնք կարող են օգտակար լինել հակառակորդին: Այս առումով Պաշտպանության նախարարությունը ժամանակ առ ժամանակ դասընթացներ է կազմակերպում ռազմական թեման լուսա-բանող լրագրողների համար, սակայն ճիշտ կլինի, որ նման միջոցառումներն անցկացնվեն մշտապես և բոլոր լրատվամիջոցներում:

Ապրիլյան քառօրյա պատերազմն ստիպեց լրագրողներին ևս մեկ անգամ սթափվել և հնարավորինս արագ լուծել խնդիրները: Այդ օրերին լրագրողները հասկացան, որ պատերազմը կարող է ամեն պահ սկսվել, և հակառակորդի ապատեղեկատվական հոսքերը փորձելու են գրոհել մեր դաշտը, իսկ խուճապահար հասարակությունը, հաճախ թերահավատորեն մոտենալով իր իշխանությունների հաղորդագրություններին, տարածելու է աղբբեջանական լուրերը: Պատերազմի օրերին հայկական լրատվամիջոցների աշխատանքին տարբեր գնահատականներ են տրվել: Շատերն այդ օրերին քննադատեցին Պաշտպանության նախարարությանը՝ ասելով, թե գերատեսչությունը թաքցնում է զոհերի իրական քանակը, մինչդեռ ՊՆ-ն զոհերի մասին տեղեկատվությունը աստիճանաբար էր հաղորդում՝ ելնելով հենց էթիկական նկատառումներից: Ճիշտ չէ սառը ցնցուղի ազդեցությամբ մարդկանց ասել, թե պատերազմ է սկսվել, և ունենք մի քանի հարյուր զոհ, քանի որ սա հոգեբանական մեծ տրավմա և խուճապ կառաջացնի հասարակության շրջանում:

Հարկավոր է ընդգծել ապրիլյան պատերազմի օրերին մեդիագրագիտություն քարոզող մի քանի հետազոտողների՝ տեղեկատվական անվտանգության փորձագետ Սամվել Մարտիրոսյանի, «Մեդիամաքս» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր Դավիթ Ալավերդյանի, ՀՀ ՊՆ մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանի և այլոց ակտիվությունը, ովքեր իրենց ֆեյսբուքյան էջերի միջոցով փորձում էին սովորեցնել, թե ինչպես պետք է տարբերել ճիշտ լուրը: Նրանք ծրագրեր էին տեղադրում՝ լրագրողները և հետևորդներին հնարավորություն ընձեռելով տարբերելու լուսանկարի և տեսանյութի վայրը, վաղեմությունն ու իսկությունը:

Մտահոգիչն այն է, որ լրագրողները պատերազմից հետո էլ զոհված զինծառայողների հարազատների հետ խոսելիս էթիկական բազմաթիվ սխալներ են թույլ տվել՝ հարցնելով, օրինակ, «Եթե զինվորը ողջ լիներ, նրան ի՞նչ կասեին», կամ «ինչպե՞ս են տանում նրա մահը» և այլն:

Քննության առնելով հայկական մեդիադաշտի վերոնշյալ կարևորագույն մի քանի դրույթները և ներկայացնելով դրանց վերլուծական պատկերը, հանգում ենք այն եզրակացության, որ հայաստանյան մեդիադաշտը բազում անելիքներ ունի թե՛ մեդիագրագիտության, թե՛ հոգեբանական, և՛ թե էթիկական նորմերի պահպանման տեսանկյուններից, ուստի, տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանում հաշվի առնելով հոգեբանական գիտելիքի կարևորությունը՝ առաջարկում ենք լրատվամիջոցներին ակտիվ համագործակցություն կազմակերպել ոլորտի առաջատար մասնագետների հետ՝ պատասխանատու պահերին հանդես գալով գրագետ մոտեցումներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[1] Aristotle's Ethical Theory: 'On the Concepts of Virtue and Golden Mean', 25.01.2014, URL: <https://aquileana.wordpress.com> (Accessed: 19.05.2017).

[2] **Корконосенко С. Г.**, Правовая и этическая культура журналиста, URL: <http://evartist.narod.ru> 20.12.2012 (дата обращения: 26.08.2017).

[3] Էթիկայի վարքականոն, 22.11.2011, URL: <http://www.aravot.am> (հղումը կատարվել է՝ 04.07.2017):

[4] «Անունները ընտրել ենք, բայց դեռ չենք բաշխել չգիտենք», 03.05.2017, URL: <https://168.am> (հղումը կատարվել է՝ 14.06.2017):

[5] «Մանուշակ մանկապարտեզի դեպքից հետո երեխան չի խոսում», 03.11.2017, URL: <https://168.am> (հղումը կատարվել է՝ 14.06.2017):

[6] «Հնգյակի ծնողներն արդեն որոշել են երեխաների անունները. ընտանիքին 7.5 միլիոն դրամ կհատկացվի», URL: <http://armlur.am> (հղումը կատարվել է՝ 14.06.2017):

[7] Can you spot the 'real' fake news story? – quiz, URL: <https://www.theguardian.com> 26/12/16 (Accessed: 28.07.2017).

[8] Технологический и культуральный детерминизм, 05.09.2015, URL: <https://studopedia.su> (дата обращения: 24.07.2017).

[9] «Այսօր ծնված հնգյակի առողջական վիճակը ծայրահեղ ծանր է», URL: <http://www.7or.am/am03/05/17> (հղումը կատարվել է՝ 17.05.2017):

Խաչատրյան Նելլի

**ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՓՈՐՁԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Բանալի բառեր՝ մեդիագրագիտություն, էթիկա, օրենք, էթիկական խախտումներ, հոգեբանական առանձնահատկություններ:

Մեդիագրագիտությունն օգնում է ոչ միայն լրագրողներին, այլև հասարակությանը՝ տեղեկատվական արտահոսքերի ժամանակ տարբերելու առանցքային և ճշմարիտ տեղեկատվությունը: Լրագրողի աշխատանքային առաքելությունն է գրագետ և օբյեկտիվ լուսաբանել հասարակական հնչեղություն ունեցող բազում հարցեր: Լրագրողը միջնորդի կամ կատալիզատորի դեր է ստանձնում հասարակական հարաբերություններում, ուստի սույն աշխատանքի նպատակն է կարևորել մեդիագրագիտության դերը և էթիկական նորմերը: Աշխատանքի շրջանակներում կատարվել է ուսումնասիրություն՝ նպատակ հետապնդելով օգնել լրագրողներին խուսափելու էթիկական տարբեր խախտումներից:

Хачатрян Нелли

**НАРУШЕНИЯ АРМЯНСКОЙ ЖУРНАЛИСТСКОЙ ЭТИКИ В КОНТЕКСТЕ
МЕЖДУНАРОДНОЙ ПРАКТИКИ**

Ключевые слова: медиаграмотность, этика, закон, этические нарушения, психологические особенности.

Медиаобразование помогает не только журналистам, но и публике в умении различать достоверную информацию в информационном потоке. Умение грамотно и объективно освещать общественно важные проблемы является миссией каждого журналиста. В отношениях с общественностью журналист играет роль катализатора. Целью этой работы является оценка роли медиакорректности и этических норм. Данное исследование поможет журналистам избежать разные нарушения журналистской этики.

**VIOLATION OF ARMENIAN JOURNALISM ETHICS IN THE CONTEXT OF
INTERNATIONAL PRACTICE**

Key words: media literacy, ethics, law, ethical breach, psychological peculiarities.

Media literacy helps not only the journalists, but also the society to distinguish the most important and truthful information in the information stream. The mission of journalists is to be able to cover social important issues. The journalist is the mediator and catalyst in social relations, so the aim of this work is to evaluate the importance of media literacy and ethic norms. The research will help journalists avoid the violation of journalism ethics.